ցուց յառաջ եւ յետոյ էր եւ մնաց հայ ազգի բարախուն սիրտը։

Խորհուն գլուխը, իմացականութիւնը, եթէ անդամ չոյենք հակառակ հոսանքը նրան վերապահելով այդ կարողութիւնը, անյուսալի ոյժ է առանց սրտի ներշնչումների։ Գործնական ասպարէզում զգացական գեղումներն են մտքի իսկական թեւն ու թափը։ Մամիկոնեան հոսանքն էր պատրաստել այն սերմերը, որից բուսաւ Բագրատունիների հունձը։ Ազատասիրութիւնը եւս պէտք ունի հոգածու ձեռքերի։ Խիզախումները եւ բողոքի որոտումները որքան եւ անհետեւանք, այն նշանակութիւնն ունին, որ չեն թողնում, որ ժողովրդի խոնարհութիւնն ու հլութիւնն հաւասարուի սարկութեան։

Պէտք զգալ եւ պարտք պաշտպանելու քաղաքական իրաւունքները անդամ մահուան գընով — այն հողն է, որի վրայ կանգնեց Բագարանի արքունիքը եւ որի պատրաստութեան են ծառայած եւ նախորդ զինական շարժումները։

Սխալ կը լինէր կարծել սակայն, որ երկու խոշոր հոսանքները, որ ակօսում են մեր անցեալի չորս դարը, երկու իշխանական ընտանեկան տրամադրութեանց սոսկական ծնունդն են. կամ նրանց տոհմային ընդունակութեանց արտայայտութիւն։ Մամիկոնեան եւ Բագրատունի տները երկու ուղղութեանց առաջնորդներն են, ղեկավար ոյժերը եւ ոչ նրանց ստեղծագործողները։ Եթէ այդ իշխանական տոհմերը բնաջինջ չլինէին կամ եղած լինէին շատ առաջ, հոսանքները պիտի շարունակուէին։ Գուցէ կը կորցնէին որոշ երանգը, որ պայմանաւորուած է երկու տների անհատական յատկութեամբ, բայց իրենց էութիւնը ոչինչ չէր տուժիլ։

Գծածս քաղաքական հոսանքներն աւելի խոր արմատներ ունին եւ հանդչում են պատմական կեանքի զարգացման տարբեր տնտեսական – հասարակական երեւումների վրայ։ Դրանք են հին նախարարական կարգը եւ նորածին քաղքենութիւնը։

Սկզբում տիրական էր Հայաստանում, ինչպէս եւ ամբողջ Իրանում ֆէոդալականութիւնը։ Սասանեանների անկումով պիտի թուլանար եւ չքանար արեւելեան այդ հինաւուրց իրաւակարգը։ Արաբները նպաստեցին նրա քայքայման։ Զորս դարուան անընդհատ կռիւներում նախարարական 50 չափ տոհմերը ջնջուել էին եւ մնացել միայն մի տասնեակ։ Արդ՝ Մամիկոնեան հոսանքը հայ ֆէոդալականութեան, հայ զինուած ազնուականութեան ասպետական չունչն էր։ Ազնուականութեան տրկարացման եւ անկումի հետ պիտի վերանար հրապարակից եւ նրա գաղափարական յայտարար Մամիկոնեան տունը։ Արաբները չէին, որ պիտի հովանաւորէին Մամիկոնեաններին։

Անցնող ազնուականութեան դիրքերը հետզհետէ գրաւում էր նոր բիւրգերական դասը, քաղքենի հասարակութիւնը։ Իշխանական ամրոցները մամռոտում էին եւ քաղաքները շենանում։ Ահա այդ նոր հասարակական ոյժին է, որ յենւում են Բագրատունիները աւելի քան նօսրացած ազնուականութեան։

Նախարարական Հայաստանի ամէն մի անկիւն կեանքի փոքր բայց անկախ հնոց էր, ինքնամփոփ եւ ինքնարաւ տնտեսական եւ հասարակական մի միութիւն։ Ինքն իր պիտոյքներն է հայթայթում, պարապելով հողագործութեամբ եւ անասնապահութեամբ։ Ուրիշ դասակարգ չկար բացի աշխատաւոր շինականութիւնից։ Սա պէտք ունէր իր իշխանին, որ պահպանէր սահմանները արտաքին թշնամիներից, օտար յարձակումներից եւ առ ու կողոպուտից։

Քաղաքային բնակչութեան հաշիւներն այլ են։ Սրա գրաղմունքն է գլխաւորապէս վաճառաշահութիւն եւ արհեստները։ Երկուսն էլ պահանջում են գործունէութեան լայն եւ մեծ շրջան եւ ճանապարհների ապահովութիւն։ Մեհեծան իշխանութիւնը գերադասելի է քան մանր տէրերի ցանցը, որ իրապէս մի թակարդ է ապրանք տանող եւ բերող կարաւանների համար։ Նկատելու է նաեւ, որ քաղաքների բնակչութիւնը բաղկացած էր մեծ մասամբ օտարներից, աւելի արաբ, հրեայ, ասորի եւ պարսիկ կային քան հայ, որ տակաւին ընտել չէին առեւտրի։

Խաղաղ քաղաքականութիւնն աւելի էր համապատասխանում քաղաքներին քան ապատագրական իրարանցումները։ Արճէշի օրինակը խրատական է։ Երբ հայ ապստամբները՝ 772 թուին գնացին Արճէշի վրայ, քաղաքա-